ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ · № 4. ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1894.

ՀԱՄԱՅՆՔ

ԿԱՋԷՐԻՕԻ ՃԱՌԸ

—

Պ. Պ. դատաւորներ, իմ նպատակս չէ պաշտպանել ինձ ձեր առաջ, ես ցանկանում եմ միայն լուսաբանել իմ արարքը. Դեռ նոր պատանի, ես սկսեցի նկատել, որ մեր հասարակութիւնը վատ է կազմակերպուած, որ ամեն օր աղքատութիւնից մղուած թշուառներ ինքնասպանութեան են դիմում, թողնելով կնոջ եւ երեխաներին ամենախղճալի դրութեան մէջ։ Հարիւրաւոր բանուորներ գործ են փնտրում եւ չեն գտնում։ Մենք տեսնում ենք, ինչպէս անբախտ ընտանիքներ հաց են մուրում եւ ցրտից դողում. նրանք տանջւում են դաժան աղքատութիւնից։ Տեսնում ենք, ինչպէս երեխաները խնդրում են թշուառ մօրից այն, ինչ որ նա չի կարող տալ, որովհետեւ նա զուրկ է ամենից։ Տան փալասները կամ արդէն ծախուած են եւ կամ թէ չէ գրաւ դրած. այն ժամանակ մնում է միայն մուրալ եւ յաճախ էլ ձեռքակալուել, իբրեւ թափառաշրջիկ։

Եթէ ես հեռացայ իմ ծննդավայրից, պատճառն այն էր, որ յաճախ պատահում էր արցունք թափել, որովհետեւ տեսնում էի 8-10 տարեկան աղջիկներին աշխատելիս օրեկան 15 ժամ եւ նրանց աշխատութիւնը վարձատրւում էր 20 սանտիմով. 18-20 տարեկան աղջիկներ եւ հասակով աւելի մեծերը նմանապէս 15 ժամ աշխատում էին ամենաչնչին վարձով։ Այդ ոչ թէ միայն իմ հայրենակիցների հետ է պատահում, այլ եւ ամբողջ աշխարհի բանուորների հետ, որոնք ստիպուած են ամբողջ օրը աշխատել արեւի տակ, երբ նրանց դաժան աշխատանքն արդիւնաբերում է միլիոններ, իսկ նրանք ստիպուած են տառապել ամենայետին աղքատութեան մէջ. Նրանց կերակուրը բաղկանում է մի քիչ հացից, մի քանի պատառ բրնձից եւ քիչ ջրից, այնպէս որ հասնելով մինչեւ 30-40 տարիքը, աշխատանքից ուժասպառ եղած մեռնում են հիւանդանոցներում։ Բացի դրանից, վատ կերակրի եւ ծանր աշխատանքի հետեւանքից, այդ թշուառները վերջ ի վերջոյ զոհ են դառնում պէլագրա հիւանդութեանը, որով, ինչպէս վկայում են բժիշկները, մեր կողմերում հիւանդանում են նրանք, որոնք գործ են ածում վատ կերակուրներ եւ ենթարկուած են ծանր աշխատանքի եւ զրկանքների։

Ես մտածում էի եւ ինքս ինձ ասում, որ մարդկանց մեծ բազմութիւնը մատնուած է քաղցածութեան, եւ երեխաներն էլ տանջւում են, քանի որ քաղաքներում կայ բաւականին հաց եւ հագուստներ, որովհետեւ ես տեսել էի բազմաթիւ մեծ խանութներ լիքը բրդէ կտորներով եւ նմանապէս շատ պահեստներ ցորենի, եգիպտացորենի, որոնց շատ մարդիկ կարիք ունեն, եւ միւս կողմից տեսել եմ հազարաւոր մարդիկ, որոնք ոչինչ չեն արել, ոչ մի բան չեն արդիւնաբերել, ապրում են բանուորների աշխատանքով, մի օրում ծախսում են հազարներ իրենց քէֆի համար, անպատուում են աղքատ աղջիկներին, 40-50 սենեակներից բնակարան ունեն, 20-30 ձիաներ, բազմաթիւ սպասաւորներ, մի խօսքով կեանքի բոլոր բաւականութիւնները։ Ինչպէ՜ս ինձ ցաւ էր պատճառում տեսնել այդ անիրաւ եւ վատ կազմակերպուած հասարակութիւնը եւ յաճախ ես ինքս ինձ կրկնում էի. «Այժմ հասարակութեան անհաւասարութեան պատճառը նրանք են, որոնք իրենց ձեռքն են հաւաքել սկզբնական հարստութիւնը»։

Երբ ես մանուկ էի, ինձ սովորացնում էին սիրել հայրենիքս, բայց երբ ես տեսայ, որ հազարաւոր բանուորներ թողնում են իրենց ծննդա-

վայրերը եւ իրենց զաւակներին, մայրերին եւ հայրերին կատարեալ աղքատութեան մէջ, ես ինձ ասեցի. Հայրենիքը գոյութիւն չունի աղքատ բանւորների համար։ Մեզ համար հայրենիքը ամբողջ աշխարհն է։ Նրանք, որոնք քարոզում են հայրենիքի սէր, անում են նրա համար, որովհետեւ դորա մէջ գտնում են իրենց շահը եւ ապրուստը։ Թռչուններն էլ են պաշտպանում իրենց բունը, որովհետեւ նրա մէջ նրանք լաւ են։

Ես հաւատում էի Աստծուն, բայց երբ ես մարդկանց մէջ տեսայ այդպիսի անհաւասարութիւն, ես հասկացայ, որ ճիշտ չէ որ Աստուած ստեղծել է մարդկանց, այլ մարդիկ են ստեղծել Աստծուն եւ որ նրանց, որոնք պահելով ժողովրդին տգիտութեան մէջ ցանկանում են յարգել տալ իրենց անհատական սեփականութիւնը, ձեռնտու է որ ժողովուրդը հաւատայ դժոխքին եւ արքայութեանը։

Շնորհիւ այդ ամենի, ես դարձայ անիշխանական։

1891 թուի մայիսի մէկի անցքերից յետոյ, երբ աշխարհիս բոլոր բանւորները արտայայտում էին իրենց պահանջները, բոլոր կառավարութիւնները, թէ միապետական եւ թէ հասարակապետական, պատասխանեցին զէնքերով եւ բանտով, շատ բանւորներ սպանուեցան կամ բանտերում փակուեցան։ Այդ ժամանակից սկսած ես դարձայ անիշխանական, որովհետեւ իմացայ, որ անիշխանական իդէալը համապատասխանում է իմ դաղափարներին։ Միայն անիշխանականների մէջ ես գտայ լաւ եւ անկեղծ մարդիկ, որոնք գիտեն գործել բանւորների բարօրութեան համար։

Ես էլ սկսեցի քարոզել անիշխանական մտքեր եւ շուտով անցայ գործին։

Ես երկար չեմ ապրել Ֆրանսիայում, բայց այդ կարճ ժամանակամիջոցում, ես համոզուեցայ, որ բոլոր կառավարութիւնները միմեանց նմանում են։ Ես տեսայ ինչպէս խեղճ Հիւսիսային հանքահաններն իրենց ընտանիքները կերակրելու համար բաւականին վարձ չը ստանալով, բողոքեցին գործադուլով եւ երեքամսեայ կռուից յետոյ, ճնշուելով քաղցից, ստիպուած էին գործել նախկին պայմաններով։ Բայց կառավարութիւնը ամենուին հոգ չտարաւ այդ հազարաւոր բանւորների վրայ, որովհետեւ այդ ժամանակ զբաղուած, մեծ տօնախմբութիւններ էր պատրաստում, Փարիզում, Տուլոնում, Մարսէյլում, ի պատիւ ռուս-ֆրանսիական դաշնակցութեան։

Ասում էին, որ պէտք է նոր հարկեր աւելացնեն այդ տօների համար հարկաւոր միլիօնները գտնելու, եւ նրանք, որոնք ծախել են իրենց խղճմտանքը բուրժուազիային, այսինքն խմբագիրները, ամբողջ յօդուածներ էին գրում, որ Ֆրանսիայի եւ Ռուսաստանի դաշնակցութիւնը մեծ օգուտ կը տայ բանւորներին։ Մինչդեռ մենք, խեղճ բանւորներս, գտնւում ենք նոյն թշուառութեան մէջ եւ ստիպուած ենք տանել նոր հարկեր, որպէս զի վճարել կառավարութիւնների մեծ տօնախմբութեան ծախսերը, իսկ յետոյ, երբ պահանջում ենք հայ եւ աշխատանք, մեզ պատասխանում են հրացանի հարուածներով, ինչպէս Հիւսիսում հանքահաններին, Սիցիլիայում հողագործներին եւ շատ ուրիշներին։

Վերջերքս Վայեանը ռումբ ձգեց դեպուտատների Պալատը, ներկայ կարգերի դէմ բողոքելու համար։ Նա ոչ ոքին չսպանեց, միայն վիրաւորեց մի քանիսին, բայց այնուամենայնիւ բուրժուազական դատարանը նրան մահուան դատապարտեց եւ չբաւականանալով յանցաւորին դատապարտելուց, սկսեցին հալածել անիշխանականներին, ձերբակալելով հարիւրաւորներին ոչ այն պատճառով, որ նրանք ճանաչում էին Վայեանին, այլ այն պատճառով, որ նրանք յաճախել են անիշխանական ժողովներին։

Բայց կառավարութիւնը չէր մտածում նրանց կանանց եւ երեխաների մասին, եւ ոչ միայն նրանք էին տանջւում, որոնք ձերբակալուած, բանտերում փակուած էին, այլ եւ նրանց որդիքը հացի էին կարօտ։ Բուրժուազական արդարադատութիւնը հոգ չէր տանում այդ խեղճ անմեղների վրայ, որոնք դեռ եւս չէին ճանաչում հասարակութիւնը. նրանք ի՞նչ մեղաւոր են, որ իրենց հայրերը բանտումն են, նրանք միայն քաղցած են։

Եւ այսպէս շարունակեցին խուզարկութիւններ անել, նամակներ բանալ եւ գրաւել, արգելել ժողովները ու հրապարակախօսութիւնները, եւ այդպիսով սկսեցին մեր դէմ ամենաստոր հալածանքներ գործ դնել։

Դեռ այսօր էլ ձերբակալում են հարիւրաւոր անիշխանականների, մի որեւիցէ թերթում յօդուած գրելու կամ հրապարակաւ մտքեր արտայայտելու համար։

Այսպիսով, եթէ կառավարութիւնները մեր դէմ գործ են ածում զէնքեր, շղթաներ եւ բանտ, միթէ մենք, անիշխանականներս, որ պաշտպանում ենք մեր կեանքը, պէտք է տանը փակուենք։ Մի՞թէ պէտք է յետ կանգնենք մեր գաղափարներից՝ ճշմարտութիւնից։ Ո՛չ, ընդհակառակը, մենք կպատասխանենք կառավարութիւններին դինամիտով, ռումբերով, երկաթով եւ սրով։ Մի խօսքով մենք պարտաւոր ենք ամեն ջանք գործ դնել բուրժուազիային եւ կառավարութիւններին ոչնչացնելու համար։

Էմիլ Հանրին ձգեց իւր ռումբը բուրժուազական ըէստորան, իսկ ես վրէժխնդիր եղայ սրով։

Դուք, պ. պ. երդուեալ դատաւորներ՝ բուրժուազական հասարակութեան ներկայացուցիչներ էք. դուք ցանկանում էք իմ գլուխը, վերցրէք նրան։ Բայց չսխալուէք, որ դրանով կարգելէք անիշխանական պրօպագանդան։ Զգուշացէ՛ք, որովհետեւ ինչ կը ցանէք, այն էլ կը հնձէք։ Կառավարութիւնները սկսել են նահատակել. Քսերէսում երկաթէ գործիքներով խեղդեցին, Չիկագոյում կախաղան բարձրացրին, Փարիզում գլխատեցին, Բարցէլօնում հրացանի բռնեցին։ Նահատակների վերջին խօսքերն էին՝ «Մա՛հ բուրժուազիային»։

Այդ խօսքերը անցան ծովեր, գետեր եւ լճեր. նրանք տարածուեցին քաղաքներում, փոքր գիւղերում, միլիոնաւոր բանւորների բնակարաններում։ Բանւորների այդ բազմութիւնը, մինչեւ այժմ թոյլ էր տալիս իրեն ղեկավարել այն անձերին, որոնք իշխում են նրանց վրայ ընկերութիւնների, կօրպօրացիաների, համքարական միութիւնների եւ ուրիշ խափանարարական շատ միջոցների պատրուակով եւ որոնք միայն ծառայում են փառասէրներին, իրենց երեսփոխաններ, քաղաքային խորհրդի անդամներ ընտրել տալու համար. նպատակ ունենալով միայն լաւ ապրել առանց աշխատելու։ Բայց այժմ վերջապէս հասկանում են, որ միայն մի բան կարող է բանւորների իրաւունքը ճանաչել տալ, այն է բռնի յեղափոխութիւն բուրժուազիայի դէմ։

Երբ այդ տեղի կունենայ, այլ եւս բանւորները աղքատութիւնից ստիպուած ինքնասպանութեան չեն դիմիլ, երկար տարիներ նրանք չեն տանջուիլ բանտերում, այլ եւս կ'դատարկեն նրանց կախաղան բարձրացնել, գնդակահար անել, երկաթէ գործիքներով խեղդել, գիլիոտինով գլխատել, իսկ բուրժուաները, թագաւորները, նախագահները, քրէական եւ քաղաքական դատարանների նախագահները կը մեռնեն ժողովրդի պատնէշների առաջ եւ սոցիալական յեղափոխութեան կրակից։

—o—

ԿԱԶԷՐԻՕ'Ի ԻՒՐ ՄՕՐԸ ԳՐԱԾ

ՆԱՄԱԿԸ.

Լիոն, 3 օգոստոսի 1894.

Սիրելի մայրիկ,

Ես ձեզ գրում եմ այս երկու տողը իմ մահուան պատժի դատապարտութիւնս ձեզ իմացնելու համար։ Ի՞նչ պիտի մտածէք դուք իմ մասին։ Ո՞հ իմ սիրելի մայր, դուք չը գիտէք ինչ մտածել եւ ի հարկէ շատերը ձեզ կասեն, որ ես մի մարդասպան եւ մի չարագործ եմ։ Սակայն դուք ճանաչում էք իմ սիրտը եւ այն մեղմութիւնը, որ երբեմն ձեզ մօտ ունէի։ Ի՞հ լաւ, այսօր դեռեւս իմ սիրտը մի եւ նոյնն է։ Եթէ իսկապէս ես կատարեցի այն գործը, պատճառը այն է, որ ես յոգնել էի այսպիսի սէպ աշխարհ տեսնելուց։

Շնորհակալութիւն տէր Ալէքսանդրօ'ին, որ եկել էր ինձ տեսնելու, բայց ես չուզեցայ խօստովանուել։

Առ այժմ ես ձեզ աւելի ոչինչ չեմ ասում,

ես կաշխատեմ աւելի ուշ ձեզ գրել։ Բարեւում եմ ձեզ, իմ եղբայրներիս, իմ սիրելի քրոջս եւ բոլոր իմ բարեկամներիս եւ ազգականներիս։

Ստացէք հազար համբոյրներ ձեր սիրելի որդուց։

Սանտօ

—.—

Մենք մեր այս համարի ճակատը զարդարում ենք Կազէրիօ'ի ճառով. ճշմարի՛տ, որ իւր պարզ եւ զգացուած ոճով մեզ ներկայացնում է այդ ճառը իւր հեղինակին իբր մարդկային ազգի բարօրութեան եւ ազատութեան մի նահատակ։

Բայց տեսէք թէ բռնաւորների լրջութիւնը մինչեւ ո՞ւր է գնում. — Կազէրիօ'ին ներկայացնում են իբր մի ստոր չարագործ, մի ճիւաղ, մի սարսափ մարդկային ազգի։ Նա, որ ամբողջ աշխարհը իւր հայրենիքն է համարում, բոլոր բանտորները՝ իւր եղբայրները եւ ամեն հարստահարուածները իւր հարազատները, նա որ ամբողջ մարդկութեան համար մահը գրկեց առանց սառսուռի, նրան մարդկութեան թշնամի ներկայացնե՞լ. — ո՜հ, այս զազրելի է....

Մենք յարգանքով սեղմում ենք Կազէրիօ'ի մեզ մեկնած արիւնալի ձեռքը. նա մեռաւ յանուն տիեզերքի հարստահարուածների։ Յեղափոխական գործը մի է։ Ամեն ազգի աշխատաւորներն էլ անխտիր հարստահարվում են։ Բոլոր հարստահարուածների նպատակն էլ մի եւ նոյն է։ Յեղափոխականը ինչ ազգի էլ պատկանում լինի եւ ո՛ր երկրումն էլ լինի, խեղդում են նրան, խեղդելով նրա կոկորդում իւր ազատութեան սիրով այրուած սրտի վերջին աղաղակը։ Ազատ Ֆրանսիայում արդեւեցին հրատարակել Կազէրիօ'ի ճառը, անշուշտ վախենալով որ այդ գաղափարի նուիրուած հերոսի պարզ եւ գրաւիչ խօսքերը կարող էր յարգանք եւ սէր ծնուցանել այն հասարակութեան սրտում, որի համար նա զոհվեց։

Հայ յեղափոխական, կարդա՛ այդ մեծ յեղափոխականի վերջին կտակը եւ խոնարհուիր նրա վսեմ յիշատակի առաջ։

ԱՆԻՇԽԱՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

ԵՒ

ԻՒՐ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.

—

Անիշխանութիւն նշանակում է իշխանութեան բացասումն։ Բայց իշխանութիւնը ցանկանում է արդարացնել իւր գոյութիւնը, առարկելով, որ պէտք է պաշտպանել հասարակական հիմնարկութիւնները՝ Ընտանիքը, Կրօնը, Սեփականութիւնը եւն. նա ստեղծել է մի շարք գործիքներ իւր գործադրութիւնն և իւր սեփական վաւերացումն ապահովացնելու համար։ Այդ գործիքներից գլխաւորներն են. Օրէնքներ, Պաշտօնեաներ, Զօրք, Օրէնսդիր և Գործադիր իշխանութիւններ եւն։ Այնպէս որ, հարկադրուած լինելով պատասխանել ամենին, անիշխանական գաղափարը ստիպուած է հարուածել բոլոր հասարակական նախապաշարմունքները, խորը թափանցել մարդկային բոլոր գիտութիւնների մէջ, ապացուցանել, որ իւր հայեացքները համապատասխան են մարդուս մարմնաւոր ու հոգեկան ձգտումներին և բնական օրէնքների պահանջներին, մինչդեռ ներկայ կարգերը դէմ են ամենատարրական տրամաբանութեան և ողջամտութեան և հէնց դրա համար էլ մեր հասարակութիւններն անհաստատ են, նրանք կործանւում են յեղափոխութիւններից, որոնք յառաջ են գալիս ներկայ անարդար կարգերով ճնշուած մարդկանց սրտերում հաւաքուած ոխից։

Ուրեմն կռուելով իշխանութեան դէմ, անիշխանականները ստիպուած են հարուածել այն բոլոր հիմնարկութիւնները, որոնց իշխանութիւնը պաշտպանում է և միևնոյն ժամանակ աշխատում է ապացուցանել այդ հիմնարկութիւնների կարևորութիւնը, որպէս զի արդարացնէ իւր գոյութիւնը։

Այդպիսով անիշխանական գաղափարների

շրջանակը մեծացաւ։ Սկսելով մի հասարակ քաղաքական հերքումից, անիշխանականը ստիպուած եղաւ նմանապէս հարուածել տնտեսական և հասարակական նախապաշարմունքները, որոնել մի հասարակական ձև, ուր գոյութիւն չունենայ ներկայ հասարակական կարգերի հիմք կազմող անհատական սեփականութիւնը և միևնոյն ժամանակ բաւականութիւն տայ դէպի ապագայ կազմակերպութիւն տանող ներկայ ձգտումներին. այդպիսով Համայնականութիւն (կոմունիզմ) բառը բնականաբար տեղ բռնեց անիշխանութիւն բառի մօտ։

Քիչ յետոյ մենք կը տեսնենք, որ վերացական դատողութիւններով զբաղուողներից ոմանք պնդում են, ասելով, որ քանի անիշխանութիւնը յայտարարում է անհատական կատարեալ ազատութիւն, անիշխանութիւնը և համայնականութիւնը չեն կարող միմեանց ընդգրկել։ Հակառակ այդ սխալ դատողութեան մենք կապացուցանենք, որ անհատը միայն համայնականութեան մէջ կարող է զարգանալ և որ վերջինս չէ կարող գոյութիւն ունենալ, եթէ անհատի զարգացումը ազատ չէ, մի խօսքով մէկը միւսին լրացնում է։

Հէնց քննելու և լուծելու խնդիրների բազմատեսակութեան շնորհիւ է, որ անիշխանական գաղափարները յաջողութիւն են ունեցել և այդ հանգամանքը նպաստել է նրանց արագ տարածուելուն. սկսելով պրոպագանդայի միջոցներից զուրկ մի անյայտ խմբից, այսօր շատ թէ քիչ նրանք թափանցում են գիտութեան, գեղարուեստի և գրականութեան մէջ։

Իշխանութեան ատելութիւնն և հասարակական (սոցիալական) պահանջները շատ վաղուց են ծագել, այսինքն այն ժամանակից, երբ մարդս սկսեց հասկանալ, որ ինքը ճնշուած է։ Բայց գաղափարը քանի՞ քանի՞ շրջաններով և սիստեմաներով է անցել մինչև եկել է հասել իւր այժմեան արտայայտութեան ձևին։

Բաբէֆն առաջիններից մէկը եղաւ, որ արտայայտեց նրա նախագիծը իւր „Թէլէմ աբբայի կեանքը“ գրքում, բայց որքա՞ն մութ կերպով. . . . .

1793 թուին խօսք կար անիշխանականների մասին։ Մեզ թւում է, որ Ժակ Ռուն և „կատաղեալները“ ամենից ճիշտ են հասկացել Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնն և ամենից շատ են ջանք գործ դրել յեղափոխութիւնը ժողովրդի օգտին ծառայեցնելու համար։ Այդ պատճառով բուրժուայ պատմաբանները նրանց դերը քիչ ուսումնասիրելով, թողել են մթութեան մէջ։ Նրանց պատմութիւնը դեռ նորից պէտք է գրել. . . .

Անիշխանութիւնը միայն Պրուդօնի ժամանակ ձևակերպուեց և հանդիսացաւ իբրև կառավարութեան և իշխանութեան թշնամի։ Բայց սա դեռ լոկ մի տեսական թշնամի է, գործնականապէս, իւր հասարակական կազմակերպութեան մէջ, Պրուդօնը դեռ ընդունում է, տարբեր կոչումների տակ նոյն բոլոր վարչական կարգերը, որոնք կազմում են կառավարութեան էութիւնը։ Նապոլէօնի կայսրութեան վերջին անիշխանութիւնն ստանում է մի անորոշ միւտիւալիզմի (փոխադարձութիւն) ձև, որը Փարիզի Համայնքից յետոյ, հետզհետէ գալիս է և ձուլւում „արդիւնաբերող և սպառող ընկերութիւնների“ շեղուած և շեղուեցնող հոսանքի մէջ։

Բայց մինչև այդ անգոյն վախճանին հասնելը, աճող ծառից մի ճիւղ արդէն բաժանուել էր։ Ինտերնացիոնալը (Միջազգային Բանուորական Միութիւնը) ծնել էր Շվեյցարիայում „Իւրայի Դաշնակցութիւնը“, ուր Բակունինը տարածում էր Պրուդօնի գաղափար անիշխանութիւնը՝ իշխանութեան մերժումը, բայց աւելի զարգացնելով ու լայնացնելով, սերտ կերպով կապելով սոցիալական պահանջների հետ։

Հէնց այդ ժամանակից է սկսւում ներկայ անիշխանական շարժման շրջանը։ Բայց դեռ

շատ նախապաշարմունքներ էին մնացել և դեռ շատ հակասութիւններ էին երևան գալիս արտայայտած գաղափարների մէջ։ Գործող կազմակերպութիւնը դեռ ընդունում էր շատ վարչական մնացորդներ, իշխանական գաղափարի շատ տարրեր կենդանի էին մնացել, բայց ինչ փոյթ, շարժումը սկսուել էր, գաղափարը աճեց, զտուեց և հետզհետէ աւելի պարզուեց։

Հազիւ 13 տարի սրանից առաջ, երբ անիշխանութիւնը սկսեց արմատանալ Ֆրանսիայում, Կենտրոնի ժողովում, թէև նա դեռ թոյլ էր, իսկ նրա ընդունողները մի աննշան փոքրամասնութիւն էին կազմում, թէև բացի դրանից նրա դէմ էին ոչ միայն այժմեան հասարակական կարգերի հաստատիչները, այլ և այն կեղծ յեղափոխականները, որոնք ցանկանում են օգտուել ժողովրդի բողոքներից կառավարութեան մասնակցելու համար — բայց և այնպէս գաղափարն ունէր բաւական տարածուելու յատկութիւն ինքն իրեն արմատ բռնելու համար, առանց որևէ պրոպագանդի, բացի նրա ընդունողների բարեհաճութիւնից, նա ունէր բաւականին կենդանութիւն, որ կապիտալիստական կարգերի պաշտպանները նրան հայհոյեն, հալածեն և որ անաչառ մարդիկ նրա մասին վիճեն. ահա այդ ամենը վկայում է նրա ոյժի և կենդանութեան մասին։

Զը նայած հասարակաց կարծիքի ինքնիրեն ղեկավար երևակայող այլ և այլ բախտախնդիրների հարուածներին, չը նայած զրպարտութիւններին, նզովքներին, դատապարտութիւններին, բանտերին, իւր ոյժի շնորհիւ անիշխանական գաղափարը միշտ առաջ է գնում։ Խմբեր են կազմվում, պրոպագանդայի համար հրատարակութիւն է լինում Ֆրանսիայում, Բելգիայում, Իտալիայում, Իսպանիայում, Փորթուգալիայում, Հոլլանդիայում, սլաւոնական լեզուներով, գերմաներէն, հրէերէն, չէխերէն, հայերէն. վերջապէս շատ թէ քիչ ամեն տեղ, ամեն բարբառով։ Բայց աւելի նշանաւորն այն է, որ դժգոհների մի փոքր խմբի մէջ ծնունդ առնելով անիշխանական գաղափարները տարածուեցան հասարակութեան բոլոր շրջաններում։ Նրանք թափանցում են ամեն տեղ, ուր մարդս զարգացնում է իւր մտածողութեան ընդունակութիւնը։ Արուեստները, գիտութիւնը, գրականութիւնը ներշնչուած են նոր գաղափարներով և նպաստում են նրանց տարածուելուն։

Սկզբներում այդ գաղափարներն անգիտակցաբար էին արտայայտուում, նրանք անորոշ ձգտումներ էին և երբեմն էլ աւելի ֆրազներ, քան հաստատ համոզմունքներ։ Այսօր ո՛չ միայն անիշխանական ձգտումները ձևակերպուած են, այլ և գիտեն, որ անիշխանութիւն են քարոզում և բացարձակ պարզում են նրա դրօշակը։

Միայն անիշխանականները չեն, որ բոլորը վատ են գտնում և մի փոփոխութիւն են ցանկանում։ Այդ գանգատներն և ձգտումները դուրս են գալիս այնպիսիներից, որոնք իրենց կապիտալիստական կարգերի պաշտպան են կարծում։ Բացի այդ մարդ սկսում է զգալ, որ միայն ապարդիւն բաղձանքներով չպիտի բաւականանալ, այլ հարկաւոր է աշխատել իր ցանկացածն իրականացնել. բնականաբար սկսում են ըմբռնել և ցանկանալ գործ, պրոպագանդա գործով, այսինքն համեմատելով մարդուս ստացած զուարճութիւնն, երբ նա իր մտածածի պէս է գործում, այն անախորժութիւնների հետ, որոնք առաջանում են վարչական միտ և է օրէնքի հակառակ լինելուց, մարդիկ սկսում են աւելի ու աւելի յարմարեցնել իրենց ապրելու ձևն իրենց մտածողութեան հետ։

Եթէ անիշխանական գաղափարներն հեշտ և արագ տարածուեցան, պատճառն այն է, որ թէև նրանք դէմ են սովորական գաղափարներին, գոյութիւն ունեցող նախապաշարմունքներին, թէև նրանք առաջի անգամ լսողին վախեցնում, խրտնեցնում են, բայց այնուամենայնիւ նրանք համապատասխան են

մարդուս ներքին զգացմունքներին և մութ ձգտումներին։ Գործնական ձևով նրանք առաջարկում են մարդկութեանը իրագործել ազատութեան և բարեկեցութեան այն իդեալը, որը նա հպիւ է համարձակուել նախագծել իւր յուսալիր երազներով։ Առաջի անգամից նրանք երկիւղալի են թուում հակաճառողին, որովհետև նրանք քարոզում են ատել կամ չը յարգել մի շարք հիմնարկութիւններ, որոնց գոյութիւնը հասարակական կեանքի համար այժմ կարևոր է համարվում։ Որովհետև սովորական գաղափարների հակառակ, նրանք ապացուցանում են, որ այդ հիմնարկութիւնները վնասակար են ո՛չ այն պատճառով, որ թոյլ կամ չար մարդիկ են նրանց ղեկավարները, այլ վատ են նոյն իսկ իրանց էութեամբ։ Նրանք սովորեցնում են ամբոխին, որ չպէտք է բաւականանալ իշխող անհատների փոփոխութեամբ կամ ներկայ հիմնարկութիւնների մասնաւոր բարեկարգութեամբ, այլ որ ամենից առաջ հարկաւոր է ոչնչացնել այն, ինչ որ փչացնում է մարդկանց և հնարաւոր է դարձնում մի փոքրամասնութեան հասարակական այժերից օգտուելու և մեծամասնութեանը ճնշել, և այն, ինչ մինչև այժմ համարուել է մարդկութեան ցաւի պատճառ, միայն հետևանք է մի ուրիշ արմատական ցաւի, որի մէջ պէտք է մեղադրել հասարակութեան հիմքը։

Ինչպէս տեսանք վերևում, հասարակութեան հիմքն անհատական սեփականութիւնն է։ Իշխանութեան միակ կոչումն է պաշտպանել կապիտալը։ Անիշխանականներն աշխատել են ցոյց տալ, որ անարդարութիւն է, երբ հողն և անցեալ սերնդների աշխատանքի արդիւնքը պատկանում է մի բուռն անգործների, որ իշխանութիւնը վնասում է մարդկային զարգացման, որ նրա դերն է հովանաւորել արտօնեալներին և վերջապէս այն սկզբունքները, որոնցով իշխանութիւնն արդարացնում է իւր գոյութիւնը, անհիմն են։

Անիշխանական գաղափարները ոչ մի դէպքում չեն կարող ծառայել անձնական շահերին, տգեղ փառասիրութեան և ամենևին միջոց չեն տալ այլ և այլ բախտախնդիրներին օգտուել ժողովրդի բողոքներից իրենց համար մի տաք տեղ պատրաստելու։ Այդ պատճառով էլ բախտախնդիրներն և փառասէրները ստիպուած հեռանում են նրանցից, իսկ մտածողները սկսում են ուսումնասիրել և քննել թէ նրանք ինչ նորութիւն են պարունակում։ . . . .

Այսպիսով անիշխանական գաղափարը փառամոլների ատելութեան առարկայ դարձաւ, բայց միևնոյն ժամանակ նա արթնացրեց բարեխիղճ մարդկանց մէջ հետաքրքրասիրութիւն. դրանով է բացատրվում անիշխանական գաղափարի արագ տարածուիլը։

Եւ իրաւ, ի՞նչ կը պատասխանէք այն մարդկանց, որ ձեզ ապացուցանում են թէ ձեր գործերը լաւ կարգի դնելու համար չպէտք է մի ուրիշին յանձնել, այլ դուք ինքներդ պիտի նրանցով զբաղուէք։ Ինչպէ՞ս կը յանդիմանէք այն մարդկանց, որոնք ձեզ ցոյց են տալիս, թէ ազատ ապրելու համար չպէտք է ոչ ոքին ձեզ վերայ իշխան նշանակէք։ Ի՞նչ ասել նրանց, որ ցոյց են տալիս ձեր ցաւերի պատճառները և նրանց դարմանելու միջոցը, չեն ասում, թէ իրենց ձեռքով միայն ցաւը կը բուժուի, այլ ընդհակառակը, հասկացնում են անհատներին, թէ ամեն ոք ընդունակ է ըմբռնել իր շահը, ընտրել իր բռնելիք ուղին։

Անիշխանական գաղափարները խոր համոզմունքներ ներշնչեցին անհատներին։ Այդ համոզմունքները տարածելու համար առանց անմիջական շահ աչքի առաջ ունենալով՝ նրանք կռիւ են մղում և ամեն հալածանք յանձն առնում։ Այդ երևոյթը գրաւեց առաջառ մարդկանց ուշադրութիւնը, որով նրանք արժանի գտան ուսումնասիրել նոր գաղափարները։ Բնական է, որ չնայած ոմանց աղաղակներին, միւսների թշնամութեան, կառավարութիւնների հալածանքներին, գաղա-

փարն անդադար աճում և առաջադիմում է, ցոյց տալով բուրժուազիային, որ ճշմարտութիւնը ոչ կարելի է ոչնչացնել և ոչ խեղդել: Շուտ թէ ուշ պէտք է հաշիւ տեսնել նրա հետ:

Անիշխանութիւնը ունի իր զոհերը, իր նահատակները, բանտարկեալները, աքսորեալները, բայց նա ուժեղ և կենդանի է մնում: Նրա քարոզիչների թիւն անդադար աճում է: Ոմանք քարոզում են գիտակցաբար, որովհետև զգացել են գաղափարի բոլոր գեղեցկութիւնները, միւսները՝ պատահական քարոզիչները՝ բաւականանում են միայն ապըստամբական կոչնակ արձակելով մասնաւորապէս այն հիմնարկութիւնների դէմ, որ ամենից աւել է ոտնակոխ արել իրենց ամենաթանգ զգացմունքները կամ արդարութեան և ճշմարտութեան փափագը:

Անիշխանական գաղափարներն այնքան լայն են, որ նրանց դրօշակի տակ ամեն ոք տեղ է գտնում, երբ նրա համար թանգ է իր անհատական պատիւը և երբ նա ծարաւ ունի Արդարութեան, Գեղեցիկի և Ճշմարտութեան:

Արդեօք մարդուս իդէալը չէ՞ թօթափել ամեն կապ, ամեն ճնշում: Արդեօք այն բոլոր յեղափոխութիւնները, որ նա արել է, նոյն նպատակը չե՞ն ունեցել:

Եթէ մարդս դեռ տանում է իր կեղեքիչների իշխանութիւնը, եթէ մարդկային միտքը դեռ ճնշուած է կապիտալիստական հասարակութեան ցածութեան տակ, պատճառն այն է, որ ժառանգած գաղափարները, ռուտինան, նախապաշարմունքները և տգիտութիւնը մինչև այժմ աւելի ուժեղ են եղել, քան իր բաղձանքներն ու ազատական փափագները և դրա համար հներին վռընդելուց յետոյ նա իր գլխին նոր իշխաններ է հաստատել, երևակայելով թէ այդպիսով կազատուի:

Անիշխանական գաղափարները լոյս տարածեցին ոչ միայն աշխատաւորների մտքի վերայ, այլ և զանազան մտածողների և օգնեցին նրանց լաւ քննել իրենց սեփական զգացմունքները, մերկացնելով թշուառութեան ճշմարիտ պատճառները և նրանց վերացնելու միջոցները. ցոյց տալով ամենին հետևելիք ճանապարհը և հասնելի նպատակը. բացատրելով թէ ինչու վիժեցին անցեալ յեղափոխութիւնները:

Անհատների սրտագին զգացմունքների հետ ունեցած այդ սերտ յարաբերութիւնով է բացատրվում նրանց արագ տարածուիլը, նրանց ոյժը. և դրա համար էլ նրանց զըսպել անհնարին է: Զայրացած կառավարութիւնները թո՛ղ տնօրինեն ճնշող օրէնքներ, կատաղած յուսախաբ փառամոլները թո՛ղ փրփրեն ինչքան կուզեն նրանց և նրանց տարածողների դէմ: այսօր արդէն ճանապարհը բաց է, ոչինչ չի արգելիլ նրանց առաջ ընթանալ, թշուառների իդէալը դառնալ և նրանց յեղափոխական փորձերի շարժառիթը լինել:

Կապիտալիստական հասարակութիւնն այն աստիճան կեղծ և նեղ է, որ լայն գաղափարները նրա ազդեցութեան տակ գտնուում են չափազանց ճնշուած, իսկ շատ բարի ձգտումներ և փափագներ ոչնչանում են: Որքա՜ն անհատներ, որոնք չգիտեն գլուխ ծռել նեղ հայեացքների առաջ, ոտնակոփ են լինում և աւելի ու պակաս չափով վիրաւորուում: Նոյն իսկ եթէ նրան յաջողի ժամանակաւորապէս խեղդել այժմեան անիշխանականների ձայնը, բայց և իւր ճնշումները առաջ կը բերեն նոյնչափ անզուսպ ապստամբներ:

Ժան Գրաւ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ԻՍՊԱՆԻԱ

—

Ազատութեան նահատակներ.

Բարցէլօնում մայիսի 21-ին կառավարութիւնը գնդակահար անել տուաւ հետեւեալ վեց անիշխանականներին. Սերեղիւելա, Սօգաս, Արշ, Բերնատ, Սաբատ եւ Կօդինա։ Այդ վեց աշխատասէր եւ համեստ բանւորները դատապարտուած էին իբրեւ Պալլասի ընկերներ եւ նրա գործակիցներ։

Պալլասի համարձակ քայլը սարսափ ձգեց կառավարութեան վրայ։ Ինչպէս մի վիրաւոր գազան, վարչութիւնը հաւաքեց իւր վերջին ոյժերը, անասելի հարուածներ տուաւ յեղափոխականներին։ Նա չէր կարող երեւակայել մի անհատի մէջ այնքան ոյժ, այնպիսի յանդուգն քայլ անելու համար։ Պալլասի անուան տակ նա հարիւրաւոր անհատներ էր փնտռում։ Եւ իրաւ, միայն Բարցէլօնում 500 մարդ ձերբակալուեցան։

Այդ 500-ից վերոյիշեալ վեց յեղափոխականները մահի դատապարտուեցին։

Ի՞նչ էր դրանց մեղքը։

Պալլասի ընկերնե՛րն էին, նրանցից ամեն մէկը կարող էր վրէժխնդիր լինել իւր պաշտելի ընկերոջ մահուան համար։ Մի խօսքով կառավարութիւնը սարսափում էր այդ ազնիւ ու անվերկիւղ մարդկանցից եւ դրա համար էլ նրանք մահու արժանացան։

Մայիսի 21-ին առաւօտեան բանտի սրահը շրջապատուած էր բազմաթիւ զինուորներով։ Հերթով դուրս բերին մահապարտներին դատավճիռը կարդալու եւ ստորագրել տալու համար։ Նրանք դուրս եկան իրենց խցերից զուարթ, երգելով անիշխանական ազատաշունչ երգեր։ Նրանց սառնասրտութիւնը եւ արհամարհանքը թէ՛ զարմանք եւ թէ՛ սարսուռ էր ազդում շրջապատողների վրայ։ Բոլորը մերժեցին ստորագրել իրենց մահավճիռը, առարկելով, որ իրենք անմեղ են, միայն Կօդինան հաստատ ձեռքով ստորագրեց ասելով.

— Ամեն ինչ վերջացաւ, այժմ կաշխատենք պատուով մեռնել. . . .

Մահապարտները ցանկութիւն էին յայտնել տեսնել իրենց ընտանիքներին, միայն Կօդինան մերժել էր, ասելով. — „Իմ հայրս ծեր է եւ հիւանդ, նրան միք անհանգստացնիլ։ Իմ ընտանիքը մի քանի տխուր բոպէներ պիտի անցկացնի ինձ տեսնելով, աւելի լաւ է խոյս տալ դրանից։ Ես ցանկանում եմ մեռնել, ինչպէս պէտք է մեռնել իմ հանդամանքներում։“

Անկարելի է նկարագրել այն տեսարանը, երբ մահի դատապարտուած հայրերը գրկախառնւում էին իրենց զաւակների եւ կանանց հետ. Նրանց զաւակների հեծեծանքը, ամուսինների արտասուքը, նրանց վերջին հրաժեշտի գրկախառնութիւնը մարդու սիրտ էին կտրատում. . . . Բայց գազան կառավարութեան վճիռն անփոփոխելի էր, նրա խիղճը քարացել էր լացի եւ թշուառութեան ձայնից. . . .

Սաբատի կինը անվերեւակայելի յուսահատութեան մէջ էր։

Արշի կինը, կնոջ քոյրը եւ երեխաները միասին գրկախառնուել էին, այնպէս որ հնար չկար նրանց բաժանել։

— „Տեսէ՛ք ձեր գործը, անիրաւնե՛ր, — աղաղակում էր Արշը։ — Տեսէ՛ք մի ընտանիք թշուառութեան մէջ. . . . Արդեօք ե՞ս էի ռումբ ձգողը։ Բանտարկութիւնը ձեզ բաւական չէ՞ր, ձեզ արիւն է հարկաւոր, այնպէս չէ՞։ Մարդասպանե՛ր, մարդասպանե՛ր“. . .

Սոգասի ընտանիքը շատ անմխիթար դրութեան մէջ էր։ Այնտեղ էին նրա կինը, իւր փոքրիկ աղջիկը եւ չորս քոյրերը։ Նրանք լուռ համբուրում էին եւ միայն լսւում էր Սոգասի ձայնը, որ անդադար կրկնում էր՝ „Ո՜հ, իմ խեղճ աղջիկ, իմ թշուառ աղջիկ“։

Բերնարտին տեսնելու էր եկել նրա հայրը։ Թշուառ ծերունին խեղդւում էր արտասուքներից եւ կրկնում. „Ա՜խ, իմ սիրելի որդի, ահա վշտեր, որ սփոփել անկարելի է“։

Սաբատը դիմեց իւր ընտանիքին եւ իւր չորս զաւակներին հետեւեալ խօսքերով.

— „Ես ձեզ արդելում եմ լալ եւ ձեզ պատիւրում եմ վրէժխնդիր լինել։ Տեսէ՛ք ինչպէս են մեռնում եւ սովորեցէ՛ք մեռնել, եթէ հարկը կը պահանջի։ Լա՛ւ լսեցէք, ես վրէժխնդրութիւն եմ պահանջում, վրէժխնդրութի՛ւն։“

Վերջապէս հասաւ բոպէն։ Առաւօտեան ժամը 6-ն էր։ Երկինքը մթնել էր։ Ահռելի կայծակներին յաջորդում էին որոտումները։ Անձրեւը հեղեղի պէս թափւում էր եւ աւելի եւս զարհուրելի դարձնում այդ հոգետանջ բոպէները։ Կարծես ամբողջ բնութիւնը բողոքում էր կատարուելի ոճրագործութեան դէմ. . .

Խցիցը դուրս գալիս, Սաբատն ասաց իւր վիճակակիցներին.

— „Դեղեցիկ եղանակ, ընկերնե՛ր։“

Կօդինան առաջ էր գնում, գլուխը բարձր

բռնած. նրա քայլերը հաստատ էին եւ երեսը խաղաղ։ Միւսները նոյնպէս գնում էին լուռ եւ հանդարտ։

Երբ զինուորների գունտը կազմուեց, վեց անիշխանականների աչքերը ծածկեցին սպիտակ կտաւի կտորներով եւ հրամայեցին նրանց ծունկ չոքել։ Կօդինան եւ Սաբատը դիմադրեցին, ցանկանալով անպատճառ կանգնած մեռնել, բայց նրանց էլ ստիպեցին։

Սովորութեան համեմատ քահանան սկսեց իւր կեղծաւոր դերը կատարել. «Հաւատամք» կարդալով, թունաւորեց նահատակների նոյն իսկ վերջի վայրկեանները։

— Հաւատամք 'ի մի Աստուած, 'ի Հայրն ամենակալ. . . սկսեց քահանան։

— Մարդասպանն է՛ր, — խօսքը կտրեց Սաբատը։

— Կեցցէ՛ Անիշխանութիւն, — գոչեց Սրշը։

— Մնա՛ք բարեւ, իմ երեխաներ, — աղաղակում էր Սօգասը։

Այդ բոպէին զօրագունդը կրակ է անում։ Անիշխանական մարտիրոսները ընկնում են գնտակների կարկտի տակ։

Բայց ո՛չ ամենքը։ Կօդինան եւ Սաբատը ծնկան վրայ են, անշարժ։ Մի նոր զօրախումբ է գալիս, կենդանի մնացածներից մի քանի քայլ հեռաւորութեան վրայ կանգնում։ Աստիճանաւորը հրամայում է՝ „կրակ“։ Սաբատը ընկնում է. Կօդինան դեռ իր տեղն է, անշարժ։ Մի զինուոր բոլորովին մօտենում է եւ հրացանը վրան պարպում, բայց որովհետեւ զոհը գետնին ընկած դեռ շարժվում է, նա վերջ է տալիս այդ գազանային տեսարանին հրացանի հարուած տալով գլխին. . . . . .

. . . . . .

Մի մարդ շրջապատողների շարքերը պատռելով մօտենում է դիակների կոյտին։ — Ո՞ւր էք գնում։ Ի՞նչ էք ուզում։

— Ես ուզում եմ տեսնել եղբօրս, որին դուք սպանեցիք։

Այդ Սրշի եղբայրն էր. . . . . .

. . . . . .

Այնտեղ, ծովի վրայ, տատանվում էր Նավարը բանտանաւը, որի մէջ չորս հարիւրից աւելի անիշխանականներ սպասում էին իրենց դատապարտութեանը։ Նրանք լսել էին հրացանների ձայնը եւ շատ յուզուած էին. . . . .

. . . . . .

ԹԻՒՐՔԻԱ

—

Յեղափոխական անցքերը, ժողովրդային շարժումները Թիւրքիայում վերջի տարիներս բազմացել են եւ օրից օր տարածւում, ընդհանրանում են։ Հայաստանում, Անատոլիայում, Կրետէ կղզում, մինչեւ իսկ Կ. Պոլսում, սուլթանի քթի տակ, յեղափոխական ցոյցերը շարունակւում են։ Հայաստանի եւ Փոքր Ասիայի շարժումները ժողովրդական գոյն են կրում, այնտեղ գործողները միմիայն անհատներ չեն, ինքը ժողովուրդն է յեղափոխական։ Պոլսում շարժումն աւելի անհատական տէրրորի բնաւորութիւն է ստացել։

Յունիսի 18-ին մի անյայտ յեղափոխական գիշեր ժամանակ ռումբ է ձգում յայսմի մատնիչ Մկրտիչ Թիւթիւնճիէֆի տունը. դժբախտաբար մատնիչը բացակայ է լինում տնից։

Աշղեհանի վրայ սպանութեան փորձ անող Յակոբը կառավարութեան վայրենի տանջանքներին չդիմանալով, մեռնում է բանտում։

Ստեփան եւ Թագաւոր սեբաստացի հնչակեանները ծանր վիրաւորում են Սիմոն պէյ Մաքսուտին։ Դատարանը նրանց „101“ տարւայ աքսոր է դատապարտել, իսկ սեբաստացի Համբարձումին եւ պոլսեցի Ստեփան անունով ոսկերիչին, իբրեւ նոցա մեղսակիցներ, դատապարտել են՝ առաջինին 6 տարով, իսկ երկրորդին 8 տարով բերդարգելութեան։

Յունիս ամսին «Հ. Յ. Դաշնակցութեան» հրոսակային խմբերից մէկը Դարաքիլիսէ քրդաբնակ գիւղի մօտ պատահում է տաճկական կանոնաւոր զօրքին։ Չորս ժամ քաջաբար կռուելուց յետոյ, խմբին յաջողւում է երկու զինուոր սպանել եւ ազատուել։ Միայն Մկրտ եւ Առաքել անունով երիտասարդները ձերբակալւում են։

Մշի եւ Սասնոյ վիճակն անտանելի է, գրէթէ ամբողջ գաւառներ պաշարման դրութեան մէջ են։ Բանտերի մէջ թշուառ յեղափոխականներին զարհուրելի տանջանքներ են տալիս՝ կարմրացրած երկաթներով այրում են մարմինները, մահուան հասցնող ծեծ են տալիս, սոված ու ծարաւ են պահում, այդ բոլորը սովորական են Համիդի կառավարութեան համար։ Եւ երբ Նօրէ անունով յեղափոխականը համարձակւում է բողոքել այդ անիրաւութիւնների դէմ, նրան դանակոծելով մեռցնում են բանտի մութ խորշերում։ Չնայած այդքան բարբարոսու-

թիւններին շարժումը քանի գնում աւելի եւ աւելի է տարածւում։

Վերջերքս Պօլսից հեռագրում են եւրոպական թերթերին. — Մշում ընդհանուր ապստամբութիւն է ծագել, ժողովուրդը ջարդել է տեղային զօրքերը։ Կարինից 2,500 հոգուց բաղկացած մի բանակ են ուղարկել ապստամբութիւնը զսպելու համար։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

—

Ռուսաց յեղափոխական շարժումը նորից ոյժ եւ կենդանութիւն է ստանում։

Վերջին լուրերի համեմատ Օդեսսայում 160 ձերբակալութիւններ են եղել մի դաւադրութեան առթիւ։

Երբ մայիս ամսին ռուսաստանի զանազան քաղաքներում 500-ից աւելի մարդիկ կալանաւորեցին, այդ ժամանակ ոստիկանութեան ձեռքն ընկաւ մի նոր կուսակցութեան պրօկլամացիայի մի մասը (6,000 օրինակ)։ Այդ կուսակցութիւնը կոչւում է «Ժողովրդի Իրաւունքի Կուսակցութիւն» (Պարտիա Նարօդնավօ Պրավա)։ Նշանաւոր է Կուսակցութեան ծրագրի վերջին կէտը.

„Ուշադրութեան առնելով, որ Ռուսաստանը միատարր ամբողջութիւն չի կազմում, այլ շատ բարդ քաղաքական մարմին է, ուստի քաղաքական ազատութեան անհրաժեշտ պայմանն է, որ նրա մաս կազմող ամեն մի ազգութիւն իրաւունք ունենայ քաղաքականապէս ինքնուրոյն կազմակերպուել“։

Այսպիսով ռուս յեղափոխականն իւր ժողովրդի ազատութեան անհրաժեշտ պայման է համարում ռուս կառավարութեան հպատակ բոլոր ազգութիւնների ազատութիւնը։ Մի՞թէ այդ ազգութիւնները չ'պիտի մտածեն իրենք իրենց վիճակի համար։ Լեհաստանի յեղափոխականները թէ գործով եւ թէ պրօպագանդայով միշտ յառաջ են տանում յեղափոխական գործը, ամեն տարի նրանք բազմաթիւ զոհեր են տալիս ազատութեան դատի համար։ Բայց ի՞նչ է անում հայ կամ վրացի յեղափոխականը։

Ոչի՛նչ, կամ գրեթէ ոչինչ։

Մեր կարծիքով հայ եւ վրացի յեղափոխականները պէտք է ոյժ տան Ռուսաստանի ընդհանուր յեղափոխութեան, նրանք թէ գործով եւ թէ պրօպագանդայի միջոցով Կովկասում յեղափոխական ոյժ պիտի պատրաստեն, բարեկամական ձեռք պիտի մեկնեն ռուս յեղափոխականին եւ նրա հետ միասին տապալեն անարգ կառավարութեան լուծը։

Թո՛ղ չ'առարկեն, որ հայ յեղափոխականն զբաղուած է Տաճկա-Հայաստանի շարժումով եւ թէ ոյժերը բաժանելով, Տաճկա-Հայաստանի յեղափոխութիւնը կը վնասուի։

Մենք բոլորովին հակառակ չենք ռուսահայ յեղափոխականին Տաճկա-Հայաստանում գործելուն։ Ընդհակառակը, յեղափոխական գործը միշտ եւ ամեն տեղ սուրբ է։ Բայց ի՞նչ ասել այն բազմաթիւ յեղափոխականներին, որոնք Տաճկաստան անցնելու եւ այնտեղ գործելու հնար չունեն, անտարբեր ու ձեռնունայն նստում են, առանց նկատելու, որ իրենց առաջ գործելու լայն ասպարէզ կայ եւ որ այնտեղ էլ բռնաւորը ճնշում է խեղճ եւ աղքատ ժողովրդին. . .

Կարճ կապելով մեր խօսքը, կասենք, որ ռուսաց միապետութիւնը պէտք է տապալուի միմիայն իւր հպատակ ազգերի համերաշխ յեղափոխութիւնից։

Մի ուրիշ անգամ «Համայնքը» կաշխատի աւելի ընդարձակ կերպով շօշափել այդ կարեւոր խնդիրը։ Մամուլի կոչումն է լինել մի որոշ շրջանի ձգտումների թարգման եւ ասպարէզ տալ այդ շրջանի մէջ ծագող զանազան կարծիքներին, ուստի մենք ամենայն սիրով կ'ընդունենք վերոյիշեալ խնդրի վերաբերմամբ մեզ ուղարկած նկատողութիւնները եւ եզրակացութիւնները։

ԼԵՀԱՍՏԱՆ

—

Նախորդ համարում մենք յիշեցինք, որ 1794 թ. յեղափոխութեան տարեդարձի օրը, մի խաղաղ ցոյցի առթիւ, բազմաթիւ ձերբակալութիւններ տեղի ունեցան։ Յուլիս ամսին ձերբակալուածների դատավճիռը արձակեցին. 161 հոգի, մեծ մասամբ ուսանողներ, 2-3 տարով աքսորուեցան Ռուսաստանի հիւսիսային եւ արեւելեան նահանգները։ Բացի ուսանողներից դատապարտեալների թւումը կային եւ մի քանի գրողներ, ինչպէս «Գլօս» թերթի խմբագիր Պօտօցկին։ Վերջինիս 5 տարով Արխանգէլսկ աքսորեցին, բայց բանտարկութիւնն այնքան էր ազդել նրա վրայ, որ այժմ նա խելագարների մի հիւանդանոցում է գտնւում. յոյս կայ, որ առողջանայ։

Վերջի ժամանակներս նոր նոր ձերբակալու-

թիւններ տեղի ունեցան. բանտարկել են «Գլօս» թերթի մնացած աշխատակիցներին եւ մի քանի հոգի էլ լեհական «Նիվա»-ի խմբագրութիւնից։ Բայց մի ուրիշ, դաղտնի թերթ, «Բանւոր» անունով, շարունակում է հրատարակուել Լեհաստանի ռուսական բաժնում, նորերումս լոյս տեսաւ երրորդ համարը։

«Փշէտսվիտ» (Արշալոյս) թերթը, որ խմբագրվում է Լօնդօնում, մեծ քանակութեամբ ներմուծվում է Լեհաստան։ Բանւորական կուսակցութեան ճիշտ հաշիւներից երեւում է, որ 1894 թ. առաջի կիսամեակի ընթացքում 24,353 գրքոյկներ են տարածուել, առանց հաշուելու, որ մասնաւոր անձեր էլ շատ հրատարակութիւններ են անցկացնում երկիրը։

Պրօպագանդան, ինչպէս եւ յեղափոխական թերթերի եւ բրօշիւրների տարածելը, բազմաթիւ ձերբակալութիւնների պատճառ են լինում։ Թէեւ այդ ձերբակալութիւններն զգալի կորուստ են, բայց եւ այնպէս շարժումը բաւականին ուժեղ է. հալածանքները խանգարում են գործը, բայց անկարող են նրա առաջն առնել։

Լեհաստանի գերմանական մասում հրատարակվում է միայն սոցիալիստ-յեղափոխական «Գազէտա Բաբօտնիչեա» շաբաթաթերթը։

Աւստրիական Լեհաստանի սոցիալիստական կազմակերպութեան մասնակցում են մօտ 20,000 հոգի։ Մի տարուայ ընթացքում կազմակերպութիւնը մսխել է 12,600 գուլդէն (մօտ 10,000 ռուբլի)։ 1893 թուի յուլիսից մինչեւ 94 թ. յուլիսը 84 պրոցէս (դատավարութիւն) են տեղի ունեցել։ Բանւորական միութիւնները շատ զարգացած են։ Լոյս են տեսնում երեք թերթ, որոնցից մէկը հրէերէն է։

Բացի այդ, գոյութիւն ունի գիւղացիների ազգային-ամկավարական գոյն կրող մի ընդարձակ միութիւն։

ԱՆԳԼԻԱ

Հովանաւորել Թիւրքիայի պէս մի բարբարոս պետութեան, ինչպէս Անգլիան է անում, եւ չը վարակուել նրա կիսավայրենի վարք ու բարքից, տարօրինակ բան կը լինէր։

Ամսպէս օգոստոսի 23-ին (ն. տ.) Լօնդօնի բանտում „անհնազանդութեան“ պատճառով մի իտալացի երիտասարդ անիշխանականի, որը դատապարտուած էր 20 տարով տաժանակիր աշխատանքի, ենթարկում են 50 հարուածի։ Երիտասարդն այդ „քաղաքակիրթ“ պատժին չը դիմանալով, չորս ժամից յետոյ վերջին շունչը փչում է։

Անգլիան էլ ունի իւր Ցակոբը, այնտեղ էլ բանտում մեռցնում են անպաշտպան զոհին։ Դեռ կան միամիտ մարդիկ, որ զարմանում են, թէ ինչո՞ւ „լուսաւոր“ երկրներում անիշխանականները դիմում են ծայրայեղ միջոցների։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ.

— Թէեւ Ռուսաստանից ուղարկած նամակներ ստացվում են, բայց աւելի ապահով կը լինէր դիմել «Համայնքին» արտասահմանում գտնուող մի ծանօթի միջոցով։

— Բոլոր մեզ դիմողներին ուղարկուած են թերթիս համարները։ Եթէ ոմանք չեն ստացել, թող նորից հաղորդեն իրենց ճիշտ եւ պարզ գրած հասցէները։

— Խմբագրութիւնից կարելի է ստանալ հետեւեալ բրօշիւրները.

1. Գիւղացիների մէջ . . . գ. 10 սանտիմ։
2. Ս. Բարդինայի ճառը. . . գ. 5 սանտիմ։
3. Քաղաքական իրաւունքներ։ — Հեղ. Պետրոս Կրոպոտկինի. . . . . գ. 5 սանտիմ։
4. Պետութիւնների քայքայումը։ — Հեղ. Պ. Կրոպոտկինի. . . . . գ. 5 սանտիմ։
5. Անիշխանութիւնը։ — Հեղ. Պ. Կրոպոտկինի. . . . . գ. 5 սանտիմ։
6. Իմ գիւղացի եղբօրը։ — Հեղ. Էլիզէ Ռէկլիւ. . . . . գ. 5 սանտիմ։
7. Ինչու են մենք յեղափոխական. — Հեղ. Ժան Գրավի. . . . . գ. 5 սանտիմ։
8. Յեղափոխական փոքրամասնութիւնները. — Հեղ. Պ. Կրոպոտկինի. . . . . գ. 5 սանտիմ։
9. Քրքիջներ. — Հեղ. Վարդգէսի. . . . . գ. 5 սանտիմ։

Թերթիս դիմել հետեւեալ հասցէով.

W. Voynich. (Hamaïnk). 3, Iffley Road, 3. Hammersmith, W., London.

Փարիզ. Միջազգային տպարան.